

Արագածոտնի մարզպետն այցելել է վիրավոր զինվորին

30.05.2014

Մայիսի 29-ին Արագածոտնի մարզպետ Սարգիս Սահակյանը զինվորական հոսպիտալում հանդիպել է Ղարաբաղա-ադրբեջանական հակամարտ զորքերի շփման գծի հարավային ուղղությամբ մայիսի 27-ի լույս 28-ի գիշերը հակառակորդի ձեռնարկած հերթական հետախուզադիվերսիոն ներթափանցման փորձի արդյունքում վիրավորված, ժամկետային զինծառայող, Օհանավան համայնքի բնակիչ Արայիկ Ներսեհի Յակոբյանին եւ նրա ծնողներին: Մարզպետը հետաքրքրվել է զինվորի առողջական վիճակով: Նա իր բարոյական եւ նյութական աջակցությունն է ցուցաբերել զինվորին, մաղթել արագ ապաքինում եւ հայտնել է ընտանիքին առաջիկայում եւս սատարելու իր պատրաստակամությունը: